Երկրորդ ընթերցում
Նախագիծ
Պ-1103[2]-17.03.2011-ՏՀ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՈԴՎԱԾ 1. Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության 1985 թվականի դեկտեմբերի 6-ի օրենսգրքի 158-րդ հոդվածի առաջին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Առանց պիտանիության ժամկետի, պիտանիության ժամկետն անցած, պիտանիության ժամկետի կրկնակի մակնշմամբ, արտադրողի կողմից նշված բնօրինակ պիտանիության ժամկետը ջնջված և նոր ժամկետի նշումով, հայերեն լեզվով մակնշումը արտադրողի կողմից նշված բնօրինակ պիտանիության ժամկետի վրա փակցված ապրանքներ վաճառելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում պաշտոնատար անձի նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից մինչև երկու հարյուրապատիկի չափով:»:

ՀՈԴՎԱԾ 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2012 թվականի հունվարի 1-ից:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ ՀՀ կառավարության դիտողությունների և առաջարկությունների, դրանց ընդունման կամ չընդունման վերաբերյալ

Առարկության, առաջարկության հեղինակը, գրության ստացման ամսաթիվը, գրության համարը	Առարկության. առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխությունները
1	2	3	4
ՀՀ կառավարություն ԱԺ պատգամավոր Արայիկ Հովհաննիսյան	1. «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի համաձայն նախատեսվում է նոր խմբագրությամբ շարադրել օրենսգրքի 158-րդ հոդվածի 1-ին մասը, սակայն նույն մասի սանկցիան մնում է անփոփոխ: Այդ առումով նպատակահարմար է վերանայել եւ խստացնել նշված հոդվածի 1-ին մասի սանկցիաները: 2. Նախագծի ուժի մեջ մտնելու ժամկետը սահմանել 2012 թվականի հունվարի 1-ից:	1. Առաջարկվում է նշված հոդվածի առաջին մասի սանկցիան խստացնել: 2. Ընդունվել է:	1. Նախագծի 1-ին հոդվածը շարադրվել է հետևյալ խմբագրությամբ. <Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության 1985 թվականի դեկտեմբերի 6-ի օրենսգրքի 158-րդ հոդվածի առաջին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Առանց պիտանիության ժամկետի, պիտանիության ժամկետն անցած, պիտանիության ժամկետի կրկնակի մակնշմամբ, արտադրողի կողմից նշված բնօրինակ՝ պիտանիության ժամկետը ջնջված և նոր ժամկետի նշումով, հայերեն լեզվով մակնշումը արտադրողի կողմից նշված բնօրինակ՝ պիտանիության ժամկետի վրա փակցված ապրանքներ վաճառելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում պաշտոնատար անձի նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից մինչև երկու հարյուրապատիկի չափով:»: 2. Նախագծի ուժի մեջ մտնելու ժամկետը փոխարինվել է 2012 թվականի հունվարի 1-ով: